ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 04 սեպտեմբերի 2020թ.

2020 թվականի սեպտեմբերի 07-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվության մասին» որոշման նախագծի թեմայով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվության մասին»:

Ս. Ղազարյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:

Բյուրեղավան համայնքի 2020թ. ՏԱՊ-ի բաժիններից է ՏԱՊ-ի մոնիտորինգի և գնահատման պլանը:

ՏԱՊ-ի իրականացման կիսամյակային հաշվետվությունը կազմվել է մեթոդական ուղեցույցի համաձայն և մանրամասն ներկայացված են Բյուրեղավան համայնքի 2020 թվականի ՏԱՊ-ով նախատեսված և 2020 թվականի առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների վերաբերյալ ծավալային և քանակական տվյալները:

Սույն որոշման նախագծով առաջարկվում է ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվությունը:

Որոշվեց՝

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվության մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան